
ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԽՈՅԱԿԵՐՊ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐ ՍԻՍԻԱՆԻՑ

Սիսիանի քանդախանն ունի քարակերտ մեմորիալ հուշարձանների բավականին հարուստ հավաքածու. քանդախանի բակում ցուցադրված են հնագույն մենհիրներ, ժայռապատկերներ, տալբերի ժամանակաշրջաններին վերաբերող խաչքարեր ու տապանաքարեր:

Այստեղ կան Սիսիանի մերձակա բնակավայրերից քանդախան բերված շուրջ մեկ տասնյակ խոյակերպ տապանաքարեր, որոնց վրա փորագրված են արաբատառ արձանագրություններ¹: Դրանք ունեն ինչատակազրային բովանդակություն:

Նրանցից ամենավաղը թվագրվում է 1585թ. (հիշրի 993 թ.): Այն իրենից ներկայացնում է մուտավորապես 107սմ X 61սմ միջին չափեր ունեցող խոյի բազալտե քանդակ: Տապանաքարի հակառակ նիստին պատկերված է որսի տեսարան: Ննջեցյալի անունը՝ Մսֆար Կուլի, կամ Մսֆար Դալի է, իսկ թվականը փորագրված է եղնավոր գրերով (Նկ. 1):



1) سفر قلی

2) سنه ۹۹۳

Հաջորդ խոյակերպ տապանաքարը կերտված է դեղնավուն քարից (Նկ. 2): Նրա չափերն են 102սմ x 72 սմ: Այն ավելի ոճավորված է: Նրա վերին, թեք կողերի վրա արված են շեղանկյուն փորագլոր զարդապատկերներ: Խոյի նիստերից մեկը ունի չորս տողանոց արաբերեն նախադրատեսակով հետևյալ արձանագրությունը.



1) كل من عليها فان يبقی وجهه *

2) ربك ذو الالجلال والاكرام² هذه المذار

3) قبر للمرحوم [المغفور] اسکندرابن [... غیر ...]

4) سنه ۱۱۰۹

թարգմանություն.

1) Ամեն ոք, ով նրա վրա է և կմնա պատկերը

2) Զո տիրոջ փառքով և արժանապատվությամբ: Այս է տապանը

* Ղուրանի հատվածների և մահմեդական տապանագրային բանաձևերի հայերեն թարգմանությունը՝ հոդվածի հեղինակինն է:

- 3) *ճերված. թողություն ստացած. Իսքանդար իբն [...դր]*
 4) *1109 տարի (1697-98 թթ.)*

Թանգարանի հավաքածուի մեկ այլ՝ համեմատաբար փոքր չաների խոյը (81.5սմ x 45սմ) պատրաստված է մոխրագույն բազալտից (Նկ. 3): Պարանոցին քանդակված է շղթա, իրանը օլաբոցածն է: Կոբուլի մակերեսը ծածկված է ելնդավոր երկու տող արաբերեն նասխ գրատեսակով արված տապանագրով:



1) *صل على محمد مادامت البركات*

2) *۱۰۱۰ محمدا بن اسکندر*

1) *Ով Տեր, օրհնիր Մուհամմադին, քանի դեռ կա քո բարեգթությունը*

2) *Մուհամմադ իբն Իսքանդար 1010 (1602թ.)*

Առաջին տալը իրենից ներկայացնում է մահմեդական հաճախ գործածվող տապանագրային բանաձև: Դրանք հատկապես հաճախ են հանդիպում տարածաշրջանի Որոտն գյուղի մահմեդական գերեզմանատան կոթողների իլյատակագրերում³: Արձանագրության շարունակությունը հաղորդում է ճնջեցյալի անունը և մահվան տարեթիվը:

Կոթորդի մյուս նիստը ունի *الله محمد على* - Ալլահ, Ալի, Մուհամմադ
նույնպես լայնորեն տարածված տապանագրային քանաձևը:

Թանգարանի բակում տեղադրված խոյերից մեկի (նրա չափերն են՝ 104սմx 76սմ) նիստը պատկերում է երեք՝ ձեռք ձեռքի տված մարդկանց, իսկ մյուսը՝ միեկրաբը խորհրդանշող երկու պատկերներ (Նկ. 4): Այս նշանների վերևի մասում փորագրված է արաբերեն տապանագիր, սակայն, քանի որ այն արվել է ոչ խորը, ուստի խիստ հողմնահարվել է և դարձել անընթեռնելի:



Մյուս խոյը պատկերում է թամբած ձի: Չիուց վերև փորագրված է ելնդավոր արձանագրություն, որը նույնպես խիստ հողմնահարված է:

Ինչպես պարզեցինք, այս խոյակերպ տապանաքարերի մի մասը բերված է Ռոտոն գյուղից, իսկ մյուսները՝ մոտակա բնակավայրերից: Մեզ հայտնի չէ, սակայն, թե կոնկրետ ո՞ր կոթորդ, որտեղից է բերված:

Թանգարանի բակում կան նաև հայերեն արձանագրությամբ իտյակերպ տապանաքարեր, որոնցից մեկը ունի Ռ-ՃԺ (1651թ.) թվականը:

Խոյակերպ տապանաքարերը, նկատի ունենք նաև հայկականները, տարածված են այժմյան Հայաստանի Հանրապետության հարավային շրջաններում և, հատկապես, Սյունիքի ու Վայոց Ձորի մարզերում, ինչպես նաև Նախիջևանում: Նրանցից մի քանիսի վրա եղած հայերեն արձանագրությունները վերծանել և հրատարակել է Ս.Գ. Բարխուդարյանը⁴:

Ավելի ուշ շրջանի հայկական բազմաթիվ խոյակերպ տապանաքարեր են հանդիպում Ջուղայում, օրինակ Մելիքզևտի հիշատակին՝ 1583թ. քանդակվածը⁷:

Թուրք հեղինակ Աբդուլհալուք Չայը Անատոլիայում խոյակերպ տապանաքարերին նվիրված մի ամբողջ գիրք է հրատարակել. ուր պնդում է. թե ի սկզբանե խոյակերպ տապանաքարերը միայն թյուրքալեզու ժողովուրդների մշակույթին պատկանող կոթողներ են: Նա գրում է. «Որոշ հայկական գերեզմանատներում հանդիպում են խաչով ոչխարակերտ, խոյակերպ և ձիակերպ հուշարձաններ: Հազիվ թե թուրքերի Անատոլիա գալուց առաջ տարածաշրջանին տիրող բյուզանդացիների մոտ այսպիսի ավանդույթ լիներ: Մյուս կողմից տարածաշրջանի հին բնակիչների՝ վրացիների և հայերի մոտ այսպիսի ավանդույթ չկար: Այս տիպի տապանաքարերը ամենայն հավանականությամբ թուրքերի ազդեցությամբ կամ քրիստոնյա դարձած, սակայն լազային մշակույթը չկորցրած, թուրքերի միջոցով անցած կարող է լինեն հայերին կամ վրացիներին»⁸:

Ընդունելով թյուրքալեզու և ընդհանուր առմամբ խաչմարած ժողովուրդների կիրառական մշակույթում և կենցաղում խոյի ունեցած կարևոր դերը, այսուհանդերձ կարելի է ասել, որ թուրք հեղինակի եզրակացություններն անապացուցելի և վաղաժամ են, քանի որ ինչպես ստորև կտեսնենք, հայերեն արձանագրություն պարունակող ամենաևիմ թվագրություն ունեցող խոյակերպ տապանաքարերը մի երկու-երեք հարյուր տարով ավելի հին են քան մահմեդականները:

Ըստ Չայի մանրամասն հաշվարկների՝ Անատոլիայում խոյակերպ տապանաքարերի թիվը չի անցնում 30-ից, ընդ որում, դրանցից մի քանիսը ակնհայտորեն հայկական են, քանի որ դրանց վրա խաչ է փորագրված⁹: Ըստ թուրք հեղինակի, Անատոլիայում գտնվող ամենահին խոյակերպ երկու տապանաքարերը վերաբերում են 1401-1402 թթ¹⁰: Ընդհանուր առմամբ, Հայաստանի արաբատառ խոյակերպ տապանաքարերը թվագրվում են 16-18 դդ.:

Հայ գիտնականների ուսումնասիրություններից պարզվում է. որ եսյերեն արձանագրությամբ նույնատիպ տապանաքարերն ունեն շատ ավելի վաղ թվագրություն: Նրանցից հնագույնները ստեղծվել են 13-րդ. դարում, ինչպես ոմն Փիրդուլիի տապանաքարը¹¹:

Վայոց Ձորի հուշարձանների ու արձանագրությունների հմուտ ուսումնասիրող Քաջբերունին (Գաբրիել Տեր-Հովհաննիսյանը) հայոց մեջ առաջինն էր, որ փորձեց տալ տապանաքարերի տիպաբանությունը, նրանց մեջ ընդգծելով խոյակերպ մեմորիալ հուշարձանները: Իր «Ճանապարհորդական նկատողություններում»¹² նա գրում է. «Առաջին և ամենահին տեսակը՝ բարակ է ու լայնությամբ /տափակ/ դրսծ է գերեզմանի վերայ: Երկրորդը նոյն և առաջինն է, բայց միայն կանգնեցրած է երկայն կողքի վերայ, ինչպես այժմ ևս սովորելուն է: Սա պատկանում է

ամենավերջին դարերում: Երրորդ /իսկապևս /երկրորդ/ տեսակը, թե ըստ ձևում և թե ըստ ժամանակին բռնում է առաջին և երկու տեսակների մեջ-տեղը: Նա օրորոցած է և ունի համարեա առաջինի լայնությունը ու երկ-յույլի բարձրությունը, որ երկու կողքից ևս վերը աստիճանաբար նեղա-նում է... Այս գլխավոր տեսակներից յետոյ կրկին առաջ է գալիս այլ ևս - շատ հազվագիտ չորրորդ տեսակը, որ միապես գործադրում է տաճիկ-ներից ե հայերից, և պատկանում է վերջին դարերում: Դա ոչխարածև տապանաքայր իւր բոլորում եղջիրներով և ծանրակշիռ դմակով»¹³:

Սիսիանի թանգարանի բակում և այլ հնավայրերում գտնվող տապա-նաքաբերն ու նրանց հիշատակագրերը ուշագրավ են Հայաստանի տա-րածքի որոշակի շրջանների պատմության ուսումնասիրություն առումով: Դրանց ամբողջական քննությունը կարող է լույս սփռել տապանաքաբե-րի այս տիպի ժամանակագրության և տարածման արեալի վրա:

TIGRAN MIKAYELYAN

RAM-SHAPED TOMBSTONES FROM SISIAN

Museum of Sisian (administrative center of Syunik Marz of Republic of Armenia) possesses a collection of Muslim ram-shaped tombstones. Some of them was brought to the Museum from village of Vorotn and another part from the near villages. The oldest of them contains an inscription in Arabic mentioning the name of the deceased – Salar Quli and the date of his death – 993 year of Hijra (1585).

Another tombstone has a four line inscription consisting of a passage from Qur'an, the name of the deceased – Iskandar b. [...ghr] and the date of his death - 1109 year of Hijra (1697-1698).

A smaller ram stone has a traditional tombstone formula widespread on Muslim tombstones of Vorotn and the name of the deceased, as well as the year when he passed away cut in bas-relief inscription – Muhammad b. Iskandar, 1010 of Hijra (1602).

The author also referring to the works of the Armenian famous Epigrapher Sedrak Barkhudaryan, Garegin Hovsepyan shows that the most ancient Armenian ram stones containing inscriptions date back to the 13th c. and thus are much older than the Muslim ones. The article also criticizes Turkish author Abdulhaluk Çay and his *Anadoluda Türk Damgası*, *Koç Heykel-Mezar Taşları ve Türklere Koç-Koyun Meselesi*, (Ankara, 1983), where he attempts attributing the emerging of the ram-stones to the original culture of Turkic tribes, pointing out that this cannot be proved yet and the issue needs a deeper and a more detailed study.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեր շնորհակալությունն ենք հայտնում Սիսիանի Պետական Թանգարանի տնօրեն Շովիմար Պետրոսյանին՝ աջակցության համար:
2. Դուրան, 55/26-27:

3. Ի. Խաչատրյան. Դիվան Հայաստանի արաբերեն վիմագրության, VIII-XVI դդ., պրակ Ա. Երևան 1987, էջ 34:
4. Դիվան հայ վիմագրության. պրակ III. Վայոց Ձոր Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 199-200:
5. Ա. Այվազյան. Ջուղա. Երևան. 1984. Նկ. 98:
6. Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 199:
7. Գարեգին Հովսեփյան, Խաղրականք կամ Պոռչյանք հայոց պատմության մեջ. Պատմագիտական ուսումնասիրություն, Մասն առաջին, Վաղարշապատ, 1928, էջ 49-50:
8. Dr. Abdulhalim Çay. Anadoluda Türk Damgası . Koç Heykel-Mezar Ta ları ve Türkler'de Koç-Koyun Meselesi, Ankara. 1983.
9. Նույն տեղում, էջ 39:
10. Նույն տեղում, էջ 14, 19:
11. Դիվան հայ վիմագրության, պրակ III, Վայոց Ձոր Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 199-200:
12. Զաքերիունի (Գաբրիել Տեր-Հովհաննիսյանը), Ճանապարհորդական նկատողություններ, Երևան, 2003,
13. Նույն տեղում, Ա. Ղազիյան, Հ. Մելքոնյան, «Զաքերիունին և նրա «Ճանապարհորդական նկատողությունը». էջ 11: